# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<26>> ----Մայիս----2025թ. N ՄՈ/548 -Ա

ք. Արմավիր

**«ԳԵՂԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՈՒՇ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Անուշ Համբարձումյանի 2025 թվականի մայիսի 26-ի դիմումը.

**որոշում եմ՝**

1. «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Համբարձումյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հունիսի 9-ից 20-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Անուշ Համբարձումյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Նելլի Գևորգյանին:
3. «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Նելլի Գևորգյանի աշխատավարձի

վճարումը 2025 թվականի հունիսի 9-ից 20-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Անուշ Համբարձումյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հունիսի 23-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-05-28 16:04:49 GMT+4
Հավաստագրված է էլեկտրոնային